ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 04.06.2020թ. № 523 հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի 21.10.2020թ. որոշմամբ:

Պատվիրատու Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) հայտարարում է երեխաների տեսակցությունների կազմակերպման կամ երեխաներին մեկ ծնողից մյուսին հանձնման վերաբերյալ Ծառայությունում հարուցված կատարողական վարույթներով հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցելու մրցույթ:

Մրցույթին մասնակցելու հայտ կարող է ներկայացնել ցանկացած անձ, ով ունի նշված ծառայությունները մատուցելու համար սահմանված կարգով ստացված իրավասությունը հավաստող փաստաթուղթ:

Հայտերը պետք է ներառեն *դիմում, անձի պետական գրանցման վկայականի պատճեն, հոգեբանական ծառայություններ մատուցելու իրավասությունը հավաստող փաստաթուղթ, իր կողմից նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների մասին տեղեկատվություն, Երևան քաղաքում և ՀՀ մարզերում աշխատանքների օպերատիվ կազմակերպման հնարավորության մասին հակիրճ տեղեկանք, ինչպես նաև մատուցվող ծառայությունների գնի վերաբերյալ առաջարկություն: Մրցույթի հայտը ներկայացվում է անձի կողմից՝ սոսնձված և ստորագրված փակ ծրարով, որի դիմերեսին պետք է գրված լինի* **«Զբացել մինչև հայտերի բացման օրը»:**

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Մրցութային հանձնաժողովին՝ Ծառայության Ընդհանուր բաժնի միջոցով ք.Երևան, Հալաբյան 41ա հասցեով մինչև 23.11.2020թ.՝ ժամը 18:00-ն: Դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը կբացվեն 27.11.2020թ.՝ ժամը 17:00-ին: Մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին:

Մրցույթի հաղթող կճանաչվի մրցույթի պայմաններին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի մեկ տարի ժամկետով կնքել Ծառայության Երևան քաղաքի և մարզային բաժինների կողմից հարուցված կատարողական վարույթներով հոգեբանական մասնագիտացված ծառայությունների մատուցման պայմանագիր:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցող անձանց մրցույթում հաղթող ճանաչելու մասին

ք. Երևան **23.12.2020թ.**

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 04.06.2020թ. № 523 հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը ուսումնասիրելով 2020 թվականի հոկտեմբերի 22-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մրցույթի հաղթող ճանաչել «Երանգ-Արտ ստուդիո» ՍՊԸ-ին:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ նաև Կազմակերպիչ) պարտավորվում է սույն արձանագրությունը ստորագրելուց հետո մեկ ամսվա ընթացքում հաղթողի հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ՝ **ՀԱՂԹՈՂ՝**

Հարկադիր
կատարումն ապահովող ծառայություն «Երանգ-Արտ ստուդիո» ՍՊԸ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ Տնօրեն՝

Ա. Կարախանյան Փ. Պարթև

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցելու մրցույթի հայտերի ուումնասիրման արդյունքների վերաբերյալ

ք. Երևան **28.06.2019թ.**

Սույն թվականի նեյեմբերի 27-ին, ժամը 17[00] անցկացվեց ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 04.06.2020թ. № 523 հրամանով հաստատված՝ հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցող անձանց ընտրության մրցույթային հանձնաժողովի նիստ:

Նիստն իրավազոր է, քանի որ վերը նշված հրամանով հաստատված հանձնաժողովի 5 անդամներից 5-ը ներկա են:

2020 թվականի հոկտեմբերի 22-ին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվել է հայտարարություն հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցելու մրցույթի կազմակերպման մասին:

Մինչև հայտարարության մեջ նշված վերջնաժամկետը՝ 23 նոյեմբերի 2020թ-ի ժամը 18[00], ծառայությունում ստացվել են հայտեր թվով 2 կազմակերպություններից՝

1. «Երանգ-Արտ ստուդիո» ՍՊԸ,
2. «ՄԱՆԴԱԼԱ» հոգեբանական կենտրոն Հ/Կ

որոնք, ըստ հայտերի ներկայացման հերթականության՝ գրանցվել են համապատասխան գրանցամատյանում, իսկ ստացված ծրարների վրա կատարվել է «Չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» գրառումը:

Մրցույթի հայտերի բացման նիստի ընթացքում, ըստ ստացման հերթականության, հանձնաժողովի քարտուղարի կողմից բացվեցին հայտ ներկայացրած կազմակերպությունների փաթեթները և քննության առնվեցին փաթեթներում ներկայացված փաստաթղթերը:

Նիստին մասնակցում էին նաև հայտ ներկայացրած կազմակերպությունների ներկայացուցիչները «ՄԱՆԴԱԼԱ» հոգեբանական կենտրոն Հ/Կ-ի նախագահ Նարինե Ստեփանյանը և Սոնյա Հակոբյանը «Երանգ-Արտ ստուդիո» ՍՊԸ-ի փորձաքննության բաժնի համակարգող:

Մրցույթի մասնակից կազմակերպությունների ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրելուց պարզվեց, որ երկու մասնակիցների հայտերը համապատասխանում են հայտարարությամբ ներկայացված պահանջներին: Նիստին մասնակցող ներկայացուցիչներից որոշ հարցադրումների պատասխանները ստանալուց հետո հանձնաժողովի նախագահը ձայն տվեց հանձնաժողովի անդամներին, որոնք ներկայացրեցին իրենց կարծիքները մրցույթին մասնակցող կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկների վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամների կարծիքները ամփոփելու նպատակով՝ ըստ ներկայացման հերթականության, քվեարկության դրվեց լավագույն առաջարկ ներկայացրած կազմակերպությունը որոշելու հարցը: Քվեարկության արդյունքում միաձայն մրցույթի հաղթող ճանաչվեց «Երանգ-Արտ ստուդիո» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կարախանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Աֆյան

Խ. Իգիթյան

Ն.Մարգարյան

Ա. Նազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան « 23 » դեկտեմբերի 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի, մի կողմից, և <Երանգ-Արտ ստուդիո< ՍՊԸ ի դեմս տնօրեն Փ.Պարթևի (այսուհետ՝ Կատարող)՝ մյուս կողմից (այսուհետ՝ միասին նաև Կողմեր, իսկ առանձին առանձին՝ Կողմ) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի որոշումներին և հանձնարարություններին համապատասխան մատուցել հոգեբանական փորձագիտական, դիագնոստիկ և խորհրդատվական ծառայություններ այսուհետ՝ «Ծառայություններ», իսկ Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրով նախատեսված կարգով ընդունել Ծառայությունների արդյունքը և վճարել դրա համար:

1.2 Ծառայությունները մատուցվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Անձամբ կամ համապատասխան մասնագետների (մասնագիտացված կազմակերպության) ներգրավմամբ հսկողություն իրականացնել Ծառայության մատուցման ընթացքի և որակի, դրա՝ ժամկետների պահպանման, Պատվիրատուի կիրառած տեխնոլոգիաների, մեթոդաբանության, Պատվիրատուի հանձնարարությունների և ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի պահանջների կատարման նկատմամբ.

2.1.2 Մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի մատուցած Ծառայությունների արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Ծառայությունների արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Աջակցել Կատարողին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

2.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով և ընդունել մատուցված Ծառայությունները (դրա արդյունքը), իսկ Ծառայությունների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

2.2.3 Պայմանագրի գործողության ընթացքում մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում հաստատված հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի հիման վրա Կատարողին վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված վարձատրությունը:

2.3 **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պայմանագրի համաձայն Ծառայությունները մատուցելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վարձատրությունը:

2.3.2 Պատվիրատուի համաձայնությամբ Ծառայությունների մատուցումն ավարտել նախատեսված ժամկետից շուտ:

2.3.3 Ծառայությունները մատուցելիս իր հայեցողությամբ ընտրել և կիրառել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ արդիական տեխնոլոգիաներ, մեթոդներ և միջոցներ:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, կատարել Ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուի և/կամ նրա կողմից լիազորված անձի տված ցուցումները:

2.4.2 Չտարածել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական, առևտրային, բանկային և/կամ այլ գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը:

2.4.3 Պատվիրատուին ժամանակին տրամադրել լիարժեք, ամբողջական, հավաստի և մատչելի տեղեկատվություն Ծառայությունների վերաբերյալ:

2.4.4 Ծառայությունները մատուցելիս կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, մեթոդներ և միջոցներ:

2.4.5 Անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքում նկատած խնդիրների և ծագած խոչընդոտների մասին:

2.4.6 Ծառայությունները մատուցել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

3. Կատարողի կողմից Ծառայություններները կատարելը

3.1 Ծառայությունները մատուցվում են Կատարողի կողմից անձամբ՝ իր աշխատակիցների ուժերով և միջոցներով:

3.2 Պայմանագրի կատարման ընթացքում ենթակատարողի ներգրավումը կարող է իրականացվել միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ.

3.3 Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից ներգրավված ենթակատարողի գործողությունների և անգործության համար:

3.4 Կատարողը պատասխանատվություն է կրում իր կիրառած մեթոդների և միջոցների որակի, անվտանգության և արդիականության համար:

4. Ծառայություններների վերաբերյալ հաշվետվությունները

4.1 Յուրաքանչյուր հանձնարարությունը կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում փորձագիտական եզրակացություն և/կամ մասնագիտական կարծիք տվյալ հանձնարարության վերաբերյալ:

4.2 Կատարողը Պատվիրատուի պահանջով և/կամ սեփական նախաձեռնությամբ Ծառայությունների մատուցման վերաբերյալ ներկայացնում է նաև ընթացիկ հաշվետվություններ:

5. Ծառայությունների գինը և վարձատրությունը

5.1 Պայմանագրի գինը սահմանվում է ըստ մատուցված ծառայությունների քանակի, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը մատուցված ծառայությունների քանակի և գնի վերաբերյալ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված երկկողմանի հաստատված ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 5.2 կետում նշված միավորի գնի համաձայն:

5.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրով սահմանված Կատարողի կողմից մատուցվող ծառայության գինը Երևան քաղաքում և ՀՀ մարզերում կազմում է 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուր ծառայության համար **(Ծառայության արժեքը**

ներառում է նաև տրանսպորտային ծախսերը, հարկերը, տուրքերը, օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարները, ինչպես նաև նախաքննական, քննչական, դատական և այլ պետական և ոչ պետական մարմիններում կազմակերպության աշխատակիցների կողմից կանչով ներկայանալը: Ծառայության արժեքը չի փոփոխվում այլ ոլորտի մասնագետներ ներգրավելու պարագայում /մանկաբույժ, հոգեբույժ, արատաբան և այլն/):

5.3 Պայմանագրի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու այդ գինը:

5.4 Պատվիրատուն վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է 5.1 կետով սահմանված փաստաթղթի հիման վրա սահմանված կարգով դուրս գրված հաշիվ-ապրանքագրի հիման վրա 7 բանկային օրվա ընթացքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և նախատեսված ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի թերացման հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու և Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 50 (հիսուն) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

7.1 Պատվիրատուն կարող է ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Կատարողին:

7.2 Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ լուծված Կատարողի ծանուցվելու պահից:

7.3 Կատարողը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցումն ուղարկվել է Պայմանագրում Կատարողի նշած հասցեով՝ նույնիսկ եթե որևէ պատճառով այն անձամբ վերջինիս կողմից չի ստացվել (և/կամ ետ է վերադարձվել Պատվիրատուին):

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Ծառայությունների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Վեճերի լուծման կարգը

9.1 Պատվիրատուի և Կատարողի միջև Ծառայությունների թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով կարող է

նշանակվել փորձաքննություն, որի ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

9.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

10.2 Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբնական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմի տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

10.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

10.4 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու **Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն**	**Կատարող** **<Երանգ-Արտ ստուդիո> ՍՊԸ**
ՀՎՀՀ 01223338 900011288025 Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00108444 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570017928760100
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա	Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա 50
Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	Փ. Պարթև
Գ. Միրիջանյան	

Հավելված 1
« » 2020թ.-ին կնքված
պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20 թ.
Պայմանագրի անվանումը՝ Գնահատման ծառայությունների մատուցնան պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » 2020թ.
Պայմանագրի համարը՝ № _____ Պատվիրատուն՝ ի դեմս՝ Գլխավոր քարտուղարի և Կատարողը՝ ի դեմս ընկերության տնօրենի, հիմք ընդունելով, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են Պայմանագրին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» _____ 20__թ-ից «__» _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Մատուցված Ծառայության անվանումը	Մատուցված ծառայության քանակական ցուցանիշը	Ծառայությունների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Պատվիրատու
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՎՀՀ 01223338
900011288025
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Գ. Միրիջանյան

_____

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Կատարող
<Երանգ-Արտ ստուդիո> ՍՊԸ

ՀՎՀՀ 00108444
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570017928760100

Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա 50

Փ. Պարթև

_____